8362

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՐԱՀԱՆԳ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ЗКПЗ
Հ-22

ԱԶՊԱՐՏՆԵՏՐ ԲԱԳՈՒ 1938.

ՅԿՊՅ
Շ-22
Կր

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

24 SEP 2006
09 DEC 2009

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԲՐԱՇԱՆԳ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱԶՊԱՐՏՆԵՐ ԲԱԳՈՒ 1938.

8362

17.09.2013

ՀՍՍՀ-ՍՍՀ

2450 38

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը

Անհրաժեշտ գտնել 1938 թվի ապրիլ—հունիսի առաջին կեսի ժամանակաշրջանում անցկացնել կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները բոլոր սկզբնական, շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային և հանրապետական կուսակցական կազմակերպություններում։

Բոլոր կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրը համարել՝ առաջիկա ընտրություններում ապահովել կուսակցական ղեկավար որգանների մեջ միանգամայն ստուգված բոլշևիկների ընտրությունը, վորոնք անձնազոհ նվիրված են մեր կուսակցությանը, փորձված են ժողովրդի թշնամիների դեմ մղվող պայքարում և ընդունակ են մինչև վերջ պաշտպանելու կոմունիստական կուսակցության գործը։

Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները պետք է անցկացվեն կուսակցական-քաղաքական աշխատանքի հետագա ամեն կերպ բարձրացման, մասսաների հետ կուսկազմակերպությունների կապի ամրապնդման և կուսկազմակերպությունների առջև կանգնած քաղաքական ու տնտեսական խնդիրների հաջող կատարման նշանաբանով։

Կուսակցական ղեկավար որգանների ընտրություններն անհրաժեշտ է անցկացնել ներկուսակցական դեմոկրատիան խստորեն պահպանելու և բոլշևիկյան քննադատությունն ու ինքնաքննադատությունը համարձակորեն ծավալելու հիման վրա։

ՀԱՄ Կ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

29 մարտի, 1938 թ.

ՀՐԱՀԱՆԳ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները անցկացնելիս անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել Համկ(բ)կ Կենտկոմի Պլենումի 1937 թվականի փետրվարի 27-ի հետևյալ վորոշումով.

«Կուսակցական որգանների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակով քվեարկելը։ Քվեարկությունը կատարել ըստ առանձին թեկնածությունների, ըստ վորում կուսակցության բոլոր անդամների համար ապահովելով թեկնածուներին բացարկելու և վերջիններիս քննադատելու անսահմանափակ իրավունք։

Կուսակցական որգանների ընտրությունների ժամանակ սահմանել թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկություն»։

2. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են.

ա) սկզբնական կուսակցական կազմակերպությունների պատվիրակները շրջանային, քաղաքային կուսակցական կոնֆերանսների համար և շրջանային, քաղաքային, ոկրուգային կուսակցական կոնֆերանսների պատվիրակները մարզային, յերկրային կուսակցական կոնֆերանսների ու ազգային կոմկուսակցությունների համագումարների համար։

բ) սկզբնական կուսակցական կազմակերպությունների կուսակցական կոմիտեների անդամները և կուսակցական կազմակերպիչները (այնտեղ, վորտեղ կուսկոմիտեներ չկան), շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցությունների Կենտկոմների պլենումների անդամները և վերատուգիչ հանձնաժողովների անդամները։

3. Սկզբնական կուսակազմակերպությունների կուսակցական կոմիտեների քարտուղարները, շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների Կենտկոմների քարտուղարները և բյուրոների անդամներն ընտրվում են բաց քվեարկությամբ, համապատասխան կոմիտեների պլենումներում։

4. Կուսակցական կոնֆերանսի (ժողովի) նախագահությունը և մյուս ղեկավար որգաններն ընտրվում են բաց քվեարկությամբ, իրեն՝ կոնֆերանսի (ժողովի) սահմանած թվով։

Կոնֆերանսի ղեկավար որգաններում և նոր ընտրվող կուսակցական կոմիտեի կազմում կարող են ընտրվել նաև կուսակցական կոնֆերանսների՝ խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պատվիրակները։

5. Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները կատարվում են համապատասխան կուսակցական կոմիտեի և վերատուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցման առթիվ վորոշումը կոնֆերանսի (ժողովի) կողմից լսվելուց, քննարկվելուց և ընդունվելուց հետո։

Կուսակցական որգանների հաշվետվությունները նախապես քննարկվում են կուսակցական համապատասխան կոմիտեների պլենումներում։

Հաշվետու զեկուցումների նախնական քննարկումը կուսակցության կոմիտեների պլենումներում, այդ կոմիտեների պլենումների անդամներին չի զրկում կուսակցական ժողովներում և կոնֆերանսներում կուսակցական կազմակեր-

պության ղեկավարության քննադատությամբ հանդես գալու իրավունքից։

6. Ընտրությունները անցկացնելուց առաջ, կուսակցական կոնֆերանսը (ժողովը) սահմանում է ընտրվելիք կուսակցական որգանների անդամների և թեկնածուների թիվը։

7. Կուսակցական ղեկավար որգանի նոր կազմի համար թեկնածությունները առաջադրվում են պատվիրակների կողմից և պերսոնալ կարգով քննարկվում են անմիջականորեն հենց կուսակցական կոնֆերանսում (կուսակցական որգանի անդամության համար առանձին և թեկնածության համար՝ առանձին)։

Նախապես ցուցակներ կազմել և դրանք կուսակցական կոնֆերանսի (ժողովի) նիստից անկախ քննարկել չի թույլատրվում։

Ժողովի յուրաքանչյուր մասնակցողին, կոնֆերանսի պատվիրակին, վորը ցանկանում է կուսակցական ղեկավար որգանի կազմում առաջադրել այս կամ այն թեկնածությունը, կոնֆերանսի (ժողովի) նախագահությունը ձայն է տալիս թեկնածության մասին առաջարկ մտցնելու և այդ առաջարկը հիմնավորելու համար։

Այն դեպքում, յերբ առաջարկ է ստացվում թեկնածություններ առաջադրելը դադարեցնելու մասին, կոնֆերանսի (ժողովի) նախագահությունն այդ առաջարկը դնում է կոնֆերանսի (ժողովի) լուծմանը, և բաց քվեարկությամբ վճռվում է նոր թեկնածությունների ցուցակագրությունը շարունակելու կամ դադարեցնելու հարցը։

8. Կուսակցական ղեկավար որգանի կազմի համար առաջադրված բոլոր թեկնածուների քննարկումը կատարվում է այն կարգով, ինչպես նրանք ցուցակագրված են յեղել կուսակցական կոնֆերանսի (ժողովի) նախագահության մոտ ստացվելիս։

Թեկնածությունը պերսոնալ կարգով քննարկելու ժամանակ պետք է ապահովված լինի կուսակցական ղեկավար որգանների կազմում առաջադրված թեկնածությունները բացարկելու անսահմանափակ իրավունքը—այսինքն՝ յուրաքանչյուր պատվիրակ կարող է առաջադրված թեկնածություններից բացարկել ցանկացած քանակությամբ և առաջադրված յուրաքանչյուր թեկնածության շուրջը կարող են արտահայտվել անսահմանափակ թվով պատվիրակներ—ինչպես «թեր», այնպես և «դեմ»։

Այն դեպքում, յերբ առաջարկ է ստացվում այս կամ այն թեկնածության քննարկումը դադարեցնելու մասին, կոնֆերանսը (ժողովը) բաց քվեարկությամբ վճռում է տվյալ թեկնածության քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը։

Կուսակցական կոնֆերանսին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցող պատվիրակները և Համ Կ(բ)Կ անդամության թեկնածուներն սկզբնական կուսկազմակերպությունների ժողովներում ու շրջանային կուսակցական ժողովներում կուսակցական ղեկավար որգանների մեջ ընտրելու համար առաջադրված թեկնածությունների քննարկման ժամանակ ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

9. Այն թեկնածությունները քննարկելուց հետո, վորոնց նկատմամբ ցուցակից հանելու առաջարկներ են յեղել, անհրաժեշտ է, յուրաքանչյուր առանձին դեպքում բաց քվեարկության կարգով, վճռել այն հարցը, թե տվյալ թեկնածությունը մտցնել, թե չմտցնել այն ցուցակի մեջ, վորը կուսակցական կոնֆերանսի (ժողովի) կողմից կազմվում է կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար։

Ըստ վորում անհրաժեշտ է հաշվել ինչպես «քվեարկությունից հանելու ոգին», այնպես և «քվեարկությունից հանելու դեմ» տրված բոլոր ձայները։

Այն թեկնածությունները, վորոնց քվեարկությունից հանելու մասին առաջարկ չի ստացվել, բաց քվեարկության չեն դրվում և մտցվում են փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրություններն անցկացնելու ցուցակի մեջ։

10. Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները անցկացնելուց առաջ, քվեարկության արդյունքները հաշվելու համար կուսակցական կոնֆերանսը (ժողովը) բաց քվեարկությամբ ընտրում է ձայները հաշվող հանձնաժողով, կոնֆերանսի (ժողովի) կողմից սահմանվող թվով։ Ձայները հաշվող հանձնաժողովի անդամներն ընտրում են ձայները հաշվող հանձնաժողովի նախագահ։

Քվեարկությունից առաջ, ձայները հաշվող հանձնաժողովի նախագահը պարտավոր է կուսակցական կոնֆերանսի (ժողովի) պատվիրակներին պարզաբանել փակ (գաղտնի) քվեարկությունն անցկացնելու կարգը։

Ձայները հաշվող հանձնաժողովը փակ քվեարկությունից առաջ պարտավոր է պատրաստել քվեատուփերը և անձամբ կնքել դրանք։

11. Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունների ժամանակ փակ (գաղտնի) քվեարկությունը պետք է անցկացվի կուսակցական կոնֆերանսի դռնփակ նիստում, միայն վճռական ձայնի իրավունք ունեցող պատվիրակների ներկայությամբ։

12. Վճռական ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր պատվիրակ ստանում է կուսակցական ղեկավար որգանի մեջ ընտրելու համար կոնֆերանսի (ժողովի) կողմից նշած թեկնածությունների ցուցակի մեկ որինակ։

Կուսակցության անդամի պատվիրակային մանդատի վրա կամ կոնֆերանսին (ժողովին) ներկա գտնվող կուսանդամների ցուցակներում պետք է նշում կատարվի այն մասին, վոր կուսակցության անդամը մասնակցել է քվեարկությանը։

13. Յուրաքանչյուր պատվիրակ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի թեկնածությունների ցուցակի մեջ չնշել առանձին թեկնածությունները կամ նոր թեկնածություններ ավելացնել կուսակցական ղեկավար որգանի կազմի մեջ ընտրելու համար, անկախ այն բանից, թե կոնֆերանսը (ժողովը) քանի հոգուց է սահմանել ընտրելու կուսակցական որգանը։

14. Քվեարկությունից հետո, ձայները հաշվող հանձնաժողովը բաց է անում քվեատուփերը և առանց կոնֆերանսի (ժողովի) շենքից դուրս գալու, հաշվում է քվեարկության արդյունքները՝ կուսակցական որգանների անդամներին առանձին և կուսակցական որգանների անդամության թեկնածուներին առանձին։

Ձայները հաշվող հանձնաժողովը պարտավոր է առանձին-առանձին հաշվել յուրաքանչյուր թեկնածությանը «թեր» ու «դեմ» տրված բոլոր ձայները։

Ձայները հաշվելուց հետո, ձայները հաշվող հանձնաժողովը կազմում է արձանագրություն, վորի մեջ մտցնում է քվեարկության արդյունքները՝ յուրաքանչյուր թեկնածության համար առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը։

Այն շենքում, վորտեղ հաշվում են ձայները, վոչ վոք իրավունք չունի գտնվելու, բացի ձայները հաշվող հանձնաժողովի անդամներից։

15. Ձայները հաշվող հանձնաժողովը կուսակցական կոնֆերանսի (ժողովի) նիստում զեկուցում է քվեարկու-

թյան արդյունքների մասին, յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ՝ առանձին։

Կուսակցական ղեկավար որգանի կազմի մեջ ընտրված համարվում են այն թեկնածուները, որոնք ստացել են ձայների մեծամասնությունը, բայց կոնֆերանսին վճռական ձայնի իրավունքով ներկա գտնվող պատվիրակների ձայների կեսից վոչ պակաս։

16. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածությունների ցուցակներ, գրավոր հայտարարություններ, ձայների հաշիվը և այլն) պետք է պահվեն կուսակցական որգաններում՝ գաղտնի փաստաթղթերին հատկացված իրավունքներով։

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

29 մարտի, 1938 թ.

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ԲՆՏԿՈՄԻ
ՀԱՅԿ-ՍՍՌ
Հ. Ա. Մաշտոցի անվան
ՄԵՆԱՏԵՍԱՐԱՆ

2450
38

Թողարկման պատասխանատու Ա. ԲԱԲԱԼՈՒՄՅԱՆ
Տեխմբագիր Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Главлит 2011. Азпартиздат № 55. Заказ № 1049. Тираж 10200.
Сдано в набор 7/IV 1938 г. Подписано к печати 19/IV 1938 г.
3/4 печ. лист. 39284 тип. знак. Формат 82×110/32.
Типография „Красный Восток“, Баку, улица Юного пионера, 84.

ՀՀ Ազգային գրադարան
NL0188324

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

389

RƏHBƏR PARTIJA ORQANLARЬ SECKILƏRININ KECIRILMƏSI HAQQЬNDA

YIQ(в)P MƏRKƏZI QOMITETININ QƏRARЬ

RƏHBƏR PARTIJA ORQANLARЬ SECKILƏRININ KECIRILMƏSINƏ DAJIR INSTRUQSIJA

AZPARTNƏŞR BAKЬ 1938